

դաւ ընծայել զմի մի միտս եւ զկիրարկութիւն նոցին: Ի սոյն եւ մէք եղաք առաջի Հասանել. այլ նախ կենդանութիւն բարբառոյն, (որ օր ըստ օրէ այնչափ աճէ եւ յառաջադէմ զարդանայ եւ յար ընդ փոփոխմամբ կայ, որչափ քաղաքային կրթութիւն ազգացն Եւրոպացւոց ընդ ազգն ընդ այն սփռեալ տարածանի եւ ի մօտուտ ազգէ ի քաղաքային կնանս եւ ի բարոյս ազգին.) եւ դարձեալ չլինելն իսկ ի միջի ընդարձակադոյն ազգային բառարանաց իբրեւ զLittreին եւ զSandersի յօմանեան լեզուի, (զի առաւել քաջ գիտէ ոք զիւր ինչ սեպհական բնիկ եւ կարող է հաւաստեալ դատաստան առնել զնմանէ քան օտարք առանց ինչ վտանդի մնորութեան.) չտան թոյլ առաւել ազնուագունի եւ կատարելագունի իմիք ակն ունել զայս զառաջին նուազ ի սակաւ ժամանակի: Բազմօք նպաստամատոյց մեզ եղեն Meninski, Kieffer-Bianchi, Kazimirski-Biberstein, Vullers, Zenker, Barbier de Meynard այլովքն հանդերձ, ի յօրինել զԲառարանս. եւ ոչ իսկ պակասեցին մեզ ձեռնտուք օգնականք ի մերում Մխիթարեան Միաբանութեան առ ելանելոյ յայսմ անգիւտ եւ ի մանուածապատ բաւղէ՝ տալ զթեւ Երիագնեայ ի մեր ձեռս:

Առաջնորդ մեզ կալաք յարբականին եւ ի պարսկականին զԼուղաթիւ 'օսմանիյէ եւ ի տաճկական մասին զԼէնճէի 'օսմանի, այնպէս զի գրեթէ զամենայն անուանս եւ զընաւ նշանակութիւնս՝ որ դտանէին ի նոսին, բովանդակեալ փակեցաք յանձուկ ծոցի այսր Բառագրոց:

Թէպէտ եւ ի բնէ աղքատ է բարբառն բանիւ եւ ասացածով. այլ սեպհական եւ ուրոյն արուեստիւ կամ օրինօք բազում բանս եւ կարգս կամ կանոնս դպրութեան յԱրաբացւոց եւ ի Պարսից անտի փո՛ն առեալ առ ի զնորանոր եւ զազգի ազգի տեսիլս մտացն յայտնելոյ եւ զեղեցիկս իմն զնոսին յայտ առնելոյ, եւ ամենեւին իւր աշարեալ